Ստրպետ

Բերսայի առաքելը

VII, VIII

VII

Առաքելը հաստատապես համոզված էր, թե Տիրան բեյը իրեն գիտությամբ է կողոպտել, և այնպես տանջվում էր այս մտքով, որ մի ամսի ընթացքում բոլորովին այլակերպվել էր: Օրեցօր, ժամից-ժամ, մազերի և պեխերի մեջ նորանոր սպիտակներ էին ցցվում և զգալի կերպով հալվում, մաշվում ու նիհարում էր: Ո՛չ կանոնավոր քուն ուներ և ո՛չ ախորժակ: Պողոս աղայի սենյակում, թե պատահում էր ճաշի, ընթրիքի ուտում էր, թե ոչ, մտքովն անգամ քաղց չէր անցնում, սովածություն չէր զգում: Առավոտները վաղ վեր էր կենում և վազում էր դատարանների մոտերը գտնված սրճարանները, որտեղ տասը փարա վճարելով, մի դայֆա էր խմում և ժամերով նստում, ծխում ու մտածում:

Այդպիսի դայֆաներում էին հավաքվում բոլոր գանգատավորները և այդտեղ էին խորհրդակցում փաստաբանները իրենց կլիենտների հետ, մինչև դատավորների հավաքվելը և դատաստան սկսիլը: Որքան վշտացյալների էր պատահում այդ դռներում Առաքելը, այնքան սաստկանում էին յուր վշտերը: Կային այնպիսի թշվառներ, որոնք տասնյակ տարիներով սպասել էին իրենց գործերի վճռին, բայց դեռ ոչ միայն արդարադատության, այլ մինչև անգամ վերջնական վճռի չէին արժանացել: Այդ անգործ, աշխատությունից ձեռք քաշած թշվառների հուսահատ հառաչները, բարակացավի ենթարկված թոքերն ու քսակները, պատռտած, յուղոտած հագուստները և ծակծկված կոշիկները,

ֆեսերը Առաքելին այնպես վատ էին ազդում, որ նա մոլեգնած, շատ անգամ փակում էր աչքերը չտեսնելու, խփում էր ականջները չլսելու համար: Բայց օրեցօր Առաքելն էլ նրանց հետ հալվելով, հալվում, մաշվում էր և յուր թշվառության անդունդը ավելի սոսկալի, ավելի խոր, անհատակ էր երևում: Տիրան բեյի վրա պահանջք ունեին ընդհանրապես մեծ կապիտալիստները, Մանչեստրի, Լիվրպուլի, Դրեզդենի գործարանատերերը: Այդինի, Անգյուրիի և Ադանայի բրդի, բամբակի, քիթրայի, գոտորի վաճառականները և կալվածատերերը, բայց մանր-մունր պահանջատերեր էլ շատ կային: Միայն Առաքելը չէր նրա թշվառ զոհը, այդպիսի փոքրիկ դրամատերեր շատ կային, որոնք ինչ-ինչ ապագայի հույսերով իրենց տնտեսած գումարները պահ էին տվել նրա դրամարկղը և այսօր Առաքելի հետ սգում էին:

- Մարգարե չես, բայց գուշակություններդ ուղիղ են, Առաքե՛լ,- ասաց մի օր սրճարան մտնելով Առաքելի թշվառ ընկերներից մեկը, որը նույնպես հարյուր քսան լիրա պահ էր տված Տիրան բեյի գրասենյակում,- Մարգարն ու Մարտիկը գնացել, լիզել են Հելեն խանումի կոշիկների գարշապարը և տասնական ոսկի ստանալով, փակել իրենց հաշիվները:

- Մինաս աղբա՛ր, չասի՞, որ նրանք ստորաքարշ անասուններ են, նրանք ցածհոգի, լղպոր սողուններ են, որ կարող են ամեն ինչ մրոտել, աղտեղել: Նրանք, որ այնպես գոռում-գոչում, պոռնկի նման արտասվում էին, զգում էի, որ մեզ դավաճանելու էին…

- Փողերն ստացել են ու իրիկունն իսկույն ճանապարհ ընկել:

- Իբրև թե մենք ընտանիք, զավակներ, սիրելիներ չունենք, մենք պարտեզում աճած խոտեր ենք… Մենք էլ կարոտ ենք քաշում, տապակվում ենք, բայց գործը…

- Հարյուրհիսունական լիրան տասնական լիրայով և մի-մի բիլեթով են վերջացրել…

- Գոռնե գային, մարդ երեսներին երկու խոսք գոնե ասեր, սիրտը հովացներ, հետո էլի երթային… Այդպիսի ընկեր լքողներն են մարդու հուսահատեցնում,

ապա թե ոչ, ինչի՛ Տիրան բեյերն ու Հելեն լրբերը պիտի կարողանան մեր դառն աշխատանքով ձեռք բերածը կուլ տալ: Բայց ոչինչ, ով ուզում Է հրաժարվի, ես իմ մի փարայից հրաժարվողը չեմ, եթե մինչև անգամ դրա համար զոհվելու Էլ լինիմ… -Արդար քրտինքի աշխատանքով վաստակված չէ եղել նրանց փողերը, ապա թե ոչ, ո՞վ կհամաձայնի տարիներով դառն տանջանքով դատած հարյուր հիսուն լիրայի փոխարենը տասը լիրայով բավականանալ . . . Ղայֆաշի՛, նարգիլես շուտ լից, -ասաց Մինասը, սրճարանի բազմոցի վրա տեղավորվելով և թիկունքը պատին հենելով:

-Այսօր նորից բացատրություններ է պահանջելու դատարանի միջոցով մեր փաստաբանը տիրան բեյից: Նրա առանելիքների ցուցակների մեջ ահագին զեղծումներ է գտել: Այնպիսի խարդախություններ, որոնցով կարելի է Տիրանի նենգավոր սնանկությունը ապացուցել . . . .

-Մի՛ հավատալ այդ փաստաբաններին, -ասաց Առաքելը, -այնպես են հավատացնում, վստահեցնում մարդու, որ կուրացնում և կողոպտում են, իսկ ատյան մտնելիս շվարեցնում թողնում . . .

-Չէ՛, այս մարդը գործին լավ է կպել: Ցուցակներից գտել է, որ Գալֆյանը ապառիկ ապրանքներ է բաց թողել ոչ միայն Սըվազի, Էրզրումի, Դիարբեքիրի, Մուսուլի, Հալեբի, Բաղդադի և մինչև անգամ Հեքյարի, Արաբիայի հեռավոր Հեջազի ու Եմենի վիլայեթների վաճառականներին, այլ մինչև անգամ Պարսկաստանի, Կովկասի վաճառականներին ու վերջինների վրա մեծ գումարով պահանջք է մնացել, այնպես որ սնանկության գլխավոր պատճառը այդ ապառիկներն են եղել: Բայց բանից դուրս է գալիս, որ այդ բոլոր անվանված վաճառականները, որոնք երբեք ապառիկ ապրանք չեն տարել Գալֆայանից, երևակայական են, գոյություն չունին և դրանք աստեղծվել են միայն Տիրանի բեյի փաստաբանի գրչով և ուղեղով, կեղծված տոմատների մեջ:

«Մինարեն գողացողը կանխապես պատյանը պատրաստում է», -ասում է առածը, զուր բաներ են դրանք, դրանցով գործը կարգի չի գար: Էգուց Գալֆյանը զանազան քաղաքներից, և երկրներից վկայականներ բերել կտա որոնցով կհաստատե, թե կային այնպիսի վաճառականներ, բայց կողոպտվեցան, սպանվեցան, սննկացան, մեռան և այլն, և ցեղերն էլ բնաջինջ եղան: Ո՞վ

ժամանակ ու միջոց ունի, որ երկրից երկիր ման գա և հաստատե, որ այդ երկրների վարչական ատյաններից հաստատված և տրված այդ վկայականները շինծու են և դրանք կաշառքով կամ խաթեր համար են պատրաստված: Դու ասա՛, պիտի կարողանա՞ն այն լիրբ Հելենի անունով հաստատված կայքերը խլել և բաժանել պահանջատերերի մեջ: Ահա՛ թե որտեղից մենք կարող ենք փրկություն հուսալ…

Լավ ես ասում, թե կալվածաթղթերը կարողանան ջրել: Նենգավորը ութ տարվան ընթացքում մաս-մաս այլևայլ ձևերով, դարձվածներով կամաց-կամաց դարձրել է այդ կալվածները իրեն կնոջ անվան, այնպես որ դժվար թե…

Ավելի վատ, ուրեմն նա ութ-տասը տարի է ծրագրում է կողոպտել սրան-նրան, սգացնել և օրական հացի կարոտ թողնել թշվառներին…

VIII

Պարտատերերի պահանջի համեմատ, Տիրան բեյի ո՛չ միայն տունը-տեղը, կնոջ սենյակները և սնդուկները ցուցակագրվեցան, գրավվեցան և երաշխավորության հանձնվեցան, այլ մինչև անգամ կնոջ անունով հաստատված բոլոր կալվածների եկամուտները առժամանակ գրավվեցան, մինչև գործի քննության ավարտը և վաճառական դատարանի վճիռ կայացնելը:

Երկու հարյուր հիսուն հազար լիրայով էր սնանկացել Տիրան բեյը, իսկ այդ գումարի դիմաց նա ուներ միայն յուր վաճառատան և մթերանոցների ապրանքները՝ մոտավորապես հիսուն հազար լիրայի: Այդ ապրանքը աճուրդով ծախելիս կամ վաճառականների մեջ բաժանելիս հազիվ երեսուն հազար լիրա բոներ, որովհետև, մինչև գործի ավարտը, ապրանքը կտրորվեր, կփչանար և մոդայից կընկներ: Այդ բոլորը աչքի առաջ ունենալով պարտատերերը մտածում էին փոխանակ իրենց պահանջից տասը կամ տասնևմեկ տոկոս ստանալու, այդ ստացվելիք գումարով փաստաբաններ վարձել, դատավորներին կաշառել և ամեն միջոց գործ դնելով, խլել Հելենից այն կալվածները, որոնք նենգությամբ Տիրան բեյից անցել էին գեղանի խանումի տիրապետության: Նրանք վճռել էին, որ եթե չկարողանային էլ խլել, գոնե մի լավ խայտառակել Գալֆայաններին:

Երեսուն կտոր մեծ կալված էր ժառանգել Տիրան բեյը յուր հորից, որոնք գտնվում էին Պերայում, Ղալաթիայում, Սթամբոլ-Բեզեզթան, Յալիներ, Բեյուք-Դերե, Մեծ կղզի և ուրիշ տեղեր՝ մոտավորապես հարյուր հիսուն հազար լիրա արժողությամբ: Այդ կալվածները տարեկան բերում էին ոչ պակաս տասներկու հազար լիրա և Կ. Պոլսի աչքի ընկնող հայտնի տեղերում էին գտնվում: Տիրան բեյը յոթ-ութ տարվա ընթացքում կամաց-կամաց այդ կալվածներից մի քանիսը նախ ծախել էր յուր ծառաներին կամ բարեկամներին նենգությամբ և ապա նրանցից ետ գնել էր յուր կինը՝ Հելենը, այնպես որ օրենքի առաջ սա այդ բոլոր կալվածների օրինական տերն էր դարձել: Դեռ այդ հերիք չէ, Տիրան բեյի նստած տունն անգամ հաստատված էր Հելեն խանումի անունով, այնպես որ Տիրան բեյը յուր կնոջ տանն էր ապրում:

Թեև օրինազանցություն էր Հելեն խանումի անունով հաստատված կալվածների եկամուտները գրավելը, տան կահ–կարասիները ցուցակագրելը, տիկնոջ սնդուկի մեջ գտնված փողերը, գոհարեղենը կնքելով դատարան բերելը, բայց թուրքերի Կ. Պոլսի վաճառականական դատարանը պարտավորված էր զիջանիլ անգլիական, ֆրանսիական և ավստրիական կոնսուլների պահանջներին, որոնց հպատակները մեծամեծ վնասի ու կորուստի էին ենթարկվել Գալֆայանի սնանկությունից: Բայց Գալֆայանին և Հելենին ոչ մի անհանգստություն չէր պատճառում այդ բոլորը, քանի որ նրանք համոզված էին, որ և ոչ մի աշխարհի կամ պետության օրենք ուժ չուներ խլելու Հելեն խանումի կալվածները, սրա սեփականությունները և բաժանելու նրա ամուսնի պարտատերերի մեջ: Անհատական սեփականության օրենքները չէին զիջանիլ և թույլատրել, որ ոտնակոխ լինի դարերով սրբագործված այդ օրենքը: Թե՛ դատավորները և թե՛ փաստաբանները վստահեցնում էին, թե նրանք ոչինչ տուժելու չէին, բացի ժամանակի կորստից և սնանկի անվանարկությունից: Իսկ այդ կեղծ սնանկի տիտղոսն էլ մեծ կորուստ չէր նախկին որմնադրի և ապա մայր սուլթանի ճարտարապետի թոռի համար, քանի որ յուր գողացած փողով և կարողությունով միշտ կարող էր շլացնել իրեն շրջապատող հասարակությանը, որոնք ո՛չ միայն ուշք չէին դարձնելու այդ ստորության, այլ շուտով էլ մոռանալու էին այս տխուր միջադեպը: Մանավանդ որ փաստաբանների պատրաստած կեղծ վաճառականական տոմարներով արդարանալու էր Տիրան բեյը ուրիշների գումարները նենգությունով յուրացնելու համար, իսկ դատարանով արդարացած

սնանկը ամաչելու ի՞նչ կարիք կարող է ունենալ:

Առաքելը այդ բոլորը ուշի-ուշով քննեց, Գալֆայանի ամեն մի գործակատարից ու բարեկամից ծանոթացավ գործի մանրամասնությունների հետ և իմացավ, թե ի՞նչ ճարպկությունով Տիրան թեյը կարողացել էր ութ-տասը տարվան ընթացքում, ուրիշների դատած ու հավաքած գումարները առատապես շռայլելուց, փչացնելուց հետո, մոտ երկու հարյուր հազար լիրա էլ քաղել և իրեն նենգ սնանկ հրատարակել: Նույնպես զգացել էր, որ պահանջատերերի փաստաբանները ոչինչ չպիտի կարողանային շահել դատավարությունով, քանի որ սեփականության հիմունքների վրա կազմված բոլոր օրենքներն ու կարգերը պաշտպանելու էին նենգավոր սնանկին և նրա անբարոյական կնոջը պիտի ետ դարձնեին Գալֆայանի պապի շինել տված բոլոր կալվածքները: Բայց և այնպես հույսի մի աղոտ նշույլ ստիպում էր Առաքելին հետևել գործի ընթացքին և սպասել դատավարության վախճանին:

Օրեր և ամիսներ անցան, անձրևաշատ աշնանը հաջորդեց ցրտաշունչ ձմեռը իրեն փորիասով և սպիտակ սավանով, որը երկար հյուր չմնաց Կ. Պոլսում: Սրանց հաջորդեց դալարագեղ գարունը, որը յուր քաղցր բուրմունքով զարդարեց Կ. Պոլիսը շրջապատող դաշտերն ու բլուրները, ամեն կողմի այգիները հարսի նման ծաղիկներով ու տերևներով պճնվեցան, և վարդի թփերի միջից սկսեցին երգել սոխակները: Ամեն կողմ նոր գարունը նոր կյանք էր սփռում և ամեն մի բուռ հող ծլեցնում, բողբոջում, և դուրս էր ժայթքում երկրի սրտից բյուր բարիք: Բնությունը անդադար շարունակում էր լուր դերը . բեղմնավորում, աճեցնում, հասցնում, չորացնում և գեաին թափելով ապականում, փտեցնում…

Այդ բոլորը մոռացնե էր տալիս մարդկանց ցրտաշունչ ձմեռը, դառնագին օրերը և սրտաճմլիկ ցավերը, բայց Առաքելի աչքերը չէին բացվում, չէր նկատում այս քաղցր բարիքների այլակերպությունները: Նրա մայրը, կինը, բալիկը մնացել էին անտեր, անտիրական և ո՞վ է իմանում, գուցե և քաղցած ու տկլոր: Ձմեռը նա յուր կնոջից երեք նամակ էր ստացել և ոչ մեկին պատասխանելու ո՛չ սիրտ ուներ, ո՛չ քաջություն: Կինն ու մայրը լսել էին Առաքելի գլխին եկած դժբաղդությունը խորհուրդ էին տվել թքել այդ գումարի վրա և վերադառնալ իրենց մոտ, բայց ոչ մի ազդեցություն չէր ունեցել Սառայի աղերսանքը, Առաքելի սիրտը չէր

փափկել… Սա մտածում էր կամ փողերը ստանալ և կամ վրեժը լուծել…

Օ՜հ, այս ի՜նչ սոսկալի վիճակ է, այս իմ անողորմ բախտը… Պապը որմնադրությամբ Բաբերդից Կ. Պոլիս տրեխով գա, ձեռքի տակ բանացրած քարտաշների և մշակաների օրականներից խուզելով, խուզելով հազարներ դիզե և այս կալվածները թոռին թողնե, որ սա էլ շրջապատող հասարակության մոտ վարկ ունենա, կողոպտե այդ հասսրակության թշվառ անհատներին և հարյուր հազարները դիզե, անպատիժ, արդարացած ու սգացնե հազարավոր անհատներ… Տիրան բե՜յ, իշխա՜ն, վսեմաշու՜ք… չեն ասում, գո՛ղ, ավազա՛կ, հափշտակո՛ղ գազան, ասում էր դառնացած սրտով Առաքելը և հառաչում աղիողորմ ձայնով:

Մայիսի միջերքում նշանակված էր Գալֆայանի սնանկության դատավարության օրը: Առավոտ վաղ բոլոր պահանջատերերը կամ նրանց ներկայտցացիչների փաստարկեցին հետ հավաքվել էին Այա-Սոֆիայի մոտ գտնված Թիջարեթ մեջլիսի (վաճառականական դատարան) մեծ դահլիճում և իրար հետ միտք էին փոխանակում: Ամեն մի փաստաբան յուր ձեռք բերած փաստերն էր ընկերակիցներին հայտնում և նրրանց խորհուրդը լսում: Պահանջատերերն էլ, ճաշի նստած տիկնոջ բերանին ու աչքերին նայող շների նման, դիտում էին իրենց փաստաբանների շրթունքների ամեն մի շարժումները և ուշի-ուշով լսում արտասանած խոսքերը:

Դեռ ո՛չ դատավորներն էին հավաքված, ո՛չ էլ պատասխանատուները իրենց փաստաբաններով, բայց դատավարական սրահի բազմոցների վրա տեղ էին բռնել Կ. Պոլսի երկսեռ հասարակության հետաքրքիր ներկայացուցիչները: Ղարագյոզի տեսարաններին վազեվազ հաճախող հանդիսատես–խանումները իրար ետևից շտապում էին տեղ բռնելու և լսելու Հելեն խանումի դատավարությունը և դրա վախճանը: Դեռ սանդուխների տակ հանդիսականները պարտավոր են իրենց կրկնակոշիկները, հովանոցները, մահակները և վերարկուները պահ տալ դռնապահներին և սրանցից համարներ ստանալով կանխիկ վճարել դրանց վարձքը՝ քսանական փարա:

Ներբասրահում պտղեղեն, մրգեղեն, քաղցրեղեն և շաքարեղեն ծախողները անցուդարձ անողներին քծնանքով առաջարկում էին իրենց վաճառքները:

Կարկանդակ ծախողները իրենց եռոտանիներով ուշադրություն էին գրավում, օշարակ և ջուր ծախողները պատրաստի բաժակները մեկնում էին դեպի այս ու այն անցորդը: Այնպես որ, եթե մինչև կեսգիշեր տևեր դատավարությունը, հանդիսականները քաղցն ու ծարավը հագեցնելու համար նեղություն չէին կրի, հարկավոր էր միայն քսակների բերանները բանալ և մի քանի սև փող ցրվել այս ու այն կողմը:

Մեծ աղմուկ էր տիրում նրբասենյակում, ամեն կողմ խումբ-խումբ հավաքված վիճում էին կամ դրա հարյուր քայլից ավելի երկայնությամբ ճեմելով՝ խոսակցում: Այդ աղմուկը երբեմն-երբեմն ընդհատվում էր պաշտոնականների և դատավորների ելումուտի ժամանակ և իսկույն շարունակվում: Մինչև դատավորների հավաքվելը, դատաստանասրահը ամբողջապես լցվել էր հանդիսականներով, այնպես որ ծառաները պարտավորվեցին օդը մաքրելու համար հրապարակին նայող լուսամուտների վարագույրները վերցնել և փեղկերը բանալ:

Երբ դատավորներն եկան և անցան իրենց խորհրդարանը, իսկույն լուր տարածվեց, որ դատաստանին նախագահելու է Միհդատ էֆենդին, Հելեն խանումի Հոմանին և երեկույթների պարընկերը: Կոնսուլների թարգմանները եկել էին և իրենց որոշ աթոռները գրավել դատավորների աթոռների ետևը, պատերի տակ: Թեև մի քանի անգամ այդ թարգմանները դուրս եկան այս ու այն եվրոպացի կամ օտարական պահանջատերերի հարցերին բավականություն տալու, բայց հնար չգտան Միհդատ էֆենդիին մի կերպ հեռացնելու նախագահի աթոռից: Եկան նույնպես Տիրան բեյի և Հելեն խանումի փաստաբանները և իրարից հեռու մեկ-մեկի հակառակ դիրք բռնեցին:

Այդ բոլորը Առաքելին այնպես էր թվում, իբր թե թատերաբեմի վրա ներկայացումներ էին տալու: Առաքելը նախապես ամեն գործ լուծված և վերջացած էր համարում: Նա լուռումունջ աչքերը երբեմն այս, երբեմն այն կողմը ձգելով, դիտում էր և անշարժ պղլում, մնում: Հավատացած էր, որ իրենց բոլոր բողոքները և արդար պահանջները մերժվելու էին: Պահանջատերերին բաժին էր պահված միայն Գալֆայանի վաճառատան մնացորդ ապրանքը, որից դատավորները պահանջատերերին տասը տոկոս վճարելով, փակելու էին

հաշիվները և կատակախաղը ավարտելու: Այս մտքերով խորասուզված, Առաքելը մինչև անգամ չէր էլ ըմբռնում շուրջը բոլորածների խոսակցությունները:

Երբ արդեն հանդիսատեսները ոռպե առ ոռպե սպասում էին դատավորների բեմ բարձրանալուն, դատասրահի դուռը բացվեցավ, և Հելեն խանումը ամուսնի թևը մտած ներս եկավ, այցելության դուրս եկած մի տիկնոջ նման պճնված մետաքսեղենների մեջ շղշղալով: Աղախինը նրանց հետևում էր ձեռքին բռնած eau-de-Cologne-ի շիշը, զանազան շալերով և թաշկինակներով: Մարդ ու կին առաջ գնացին, և յուրաքանչյուրը փաստաբանի կողքին տեղ բռնեց, նստելով չոր, տախտակե բազմոցի վրա: Աղախինը թեև անմիջապես տեղ գտավ հանդիսականների կողքին, բայց մի քանի անգամ պարտավորվեց տիկնոջ ակնարկին հետևելով՝ նրան մոտենալ, ինչ-ինչ իրեր առնել ու տալ:

Տիկին Հելենը այդ օրվա հերոսն էր. հանդիսականների աչքերը, կարճատեսների դիտակները ուղղված էին նրա կողմը: Մարդիկ նրա գեղեցկությունով, կորովամտությունով, վայելուչ շարժումներով, առնացի քաջասրտությունով և նազենի հայացքներով էին գրավված, իսկ տիկինները՝ նրա արդուզարդով, շրջազգեստի, ժապավենների, դանտելների, օղերի, մանյակների, ձեռնոցների մանրամասնություններով: Նախանձոտ կանանց սիրտը ավելի ծակում էր Հելենի այն խորամանկ և ճարպիկ խաղը, որով ոչ միայն գրավել էր իր ամուսնի ահագին կալվածներն ու կարողությունը, այլ մինչև անգամ շշմեցրել էր ողջ Կ. Պոլսի հասարակությանը:

Հելենը, նկատելով իրեն վրա սևեռված հայացքները, բոլոր ճիգով աշխատում էր, ճարպիկ դերասանուհու նման, արտաքին շարժումներով զբաղեցնել հասարակությանը, և նա այնքան ձիրք ուներ, որ կարող էր մտադրածը գործադրել: Նա այնպես դիրք Էր բռնել, որ իբր չէր էլ նկատում, որ իրենով զբաղվողներ կային դատաստանասրահում և ողբերգակ երգչուհու նման գլուխը ուսերի վրա այնպես էր տատանում, որ կարծես վշտի, տանջանքի ալիքների վրա ցնցվում և տարուբերվում էր:

Առաքելը, որ աչքից չէր փախցնում Հելենի ամեն մի շարժում, իսկույն հիշեց Շիշմանի պարահանդեսի զարդին, որը պարտեզի քյոշքի մեջ պաղպաղակ էր

վայելում Միհդատի հետ . այրված սրտի բաբախումները հանգստացնելու տենչով, թեև Միհդատի սրտաբուխ ճոռոմաբանություններով և կիզիչ համբույրներով ավելի ու ավելի արծարծվում էին նրա իրանի և երակների մեջ բորբոքումները: Այդ տեսարանը Առաքելին մտքով առաջնորդեց բոլոր այն վայրերը, որտեղ պատահել էր գեղանի Հելենին, նրա անթիվ երկրպագուների շրջաններում և խորասուզվեց զարհուրելի մտքերի անսահման օվկիանում:

Դատավորների հանկարծակի մուտքը դատասրահի բեմը սթափեցրեց Առաքելին: